



Legislation update

Summary of selected documents published for the period from 1 July 2016 to 30 September 2016

Tax

Issue 4, 2016

A Bibliography of New Legislation, Instructions and Documents, with Commentary

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Անվանումը «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
Ամսաթիվը. 7 հուլիսի 2016թ.
Համարը. ՀՕ-117-Ն
Հրատարակում. ՊՏ No. 54, 13 հուլիսի 2016թ.
Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել են էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, այդ թվում նաև հեռուստատեսությամբ վաճառք իրականացնելու դեպքում վաճառողին ներկայացվող պահանջները: Մասնավորապես սահմանվել է էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առևտուր և (կամ) ծառայություն իրականացնելիս գնորդին հասանելի տեղեկատվության ցանկը:

Միաժամանակ, սահմանվել է, որ Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվառված լինելու (հարկ վճարողի հաշվի համար ունենալու) և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար:

2. Անվանումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
Ամսաթիվը. 2 հուլիսի 2016թ.
Համարը. ՀՕ-108-Ն
Հրատարակում. ՊՏ No. 54, 13 հուլիսի 2016թ.

GENERAL LEGISLATION

1. Title On making supplements to the RA Law “On Trade and Services”

Document: RA law
Date: 7 July 2016
Number: HO-117-N
Publication: OJ No. 54, 13 July 2016
Effective: From the 10th day following the official publication

Abstract:

This amendment to the law defines the requirements set for the sales conducted through communication means ensuring electronic communication, including television. Particularly, the list of information that shall be available to the buyer when conducting trade and (or) providing services through communication means ensuring electronic communication has been determined.

At the same time, it has been defined that as an entrepreneurship activity individuals can sale goods via electronic trading platform only in case they are registered (have tax code) in accordance with the procedure prescribed by the RA government and availability of electronically issued settlement documents. In case individuals sale personal property and belongings via electronic trading platform, a separate section (subsection) is envisaged in the electronic trading platform to distinguish transactions related to the personal property.

2. Title On making supplements to the RA Law “On Joint Stock Companies”

Document: RA law
Date: 2 July 2016
Number: HO-108-N
Publication: OJ No. 54, 13 July 2016

Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Effective: From the 10th day following the official publication

Համառոտ նկարագիրը.

Օրենքում կատարված այս լրացման արդյունքում սահմանվել է, որ շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի դեպքում, այդ գործարքների կնքման որոշումն ընդունելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հիմաստով խոշոր ընկերության աուդիտոն իրականացնող անձը կամ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) պետք է տա եզրակացություն գործարքի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:

Abstract:

As a result of this addendum made to the law it has been established that in case of a large transaction involving conflict of interest, after making a decision on consummation of such transaction and before conclusion of an agreement, an entity conducting the audit of a large company as defined by the RA Law "On Accounting" or supervisory committee (supervisor) shall provide a conclusion on compliance of the transaction with the requirements of the RA Law "On Joint stock companies", as well as on compliance with market price.

Միաժամանակ, սահմանվել է, որ ընկերությունը պարտավոր է շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև վերոնշյալ եզրակացությունը հրապարակել ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում:

At the same time it has been established that after making a decision on consummation of a large transaction involving conflict of interest and before conclusion of an agreement the company shall publish the information on parties to the transaction, its conditions, nature and scope of the conflict of interest, as well as above stated conclusion on the official internet site of public notifications of the RA www.azdarar.am.

Հիշեցնենք, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝
- *հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ,*
- *գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:*

It should be reminded that in accordance with the RA Law "On Joint Stock Companies", related party to the Company shall be deemed as an interested party in the Company's transactions in case:

- *it is a party to the transaction or participates in the transaction as an intermediary or a representative;*
- *is a related party to the party to the transaction, intermediary or representative.*

3. Անվանումը ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու, աշխատանքային գրքույկները ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը սահմանելու ու ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 16-ի N 876-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

3. Title On establishing a procedure on recognition of authorized state governing body of the RA government, submission of employment record books to the authorized state governing body of the RA government and their handing to employees and on repealing the RA government decree No. 876-N dated 16 June 2006

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը. 18 օգոստոսի 2016թ.
Համարը. 882-Ն
Հրապարակում. ՊՏ No. 67, 7 սեպտեմբերի 2016թ.
Ուժի մեջ է. Ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից

Document: RA government decree
Date: 18 August 2016
Number: 882-N
Publication: OJ No. 67, 7 September 2016
Effective: From 1 January 2017

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ սահմանվել է աշխատանքային գրքույկները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը:

Abstract:

By this RA government decree a procedure on submission of employment record books to State Social Security Service of the RA Ministry of Labor and Social Affairs (hereinafter "the Service") and their handing to employees has been established.

Նշյալ կարգի սահմանումը կապված է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ: Մասնավորապես, դրանով ուժը կորցրած է ճանաչվել այն դրույթը, որով գործատուն պարտավոր էր հիմնական աշխատավայրում աշխատող բոլոր աշխատողների համար վարել աշխատանքային գրքույկ:

The establishment of this procedure is conditioned by the adoption of the RA Law No. HO-96-N on making supplements and amendments to the RA Labor Code. Particularly, by that law the provision according to which an employer is obliged to keep employment record books for all employees working in the main workplace has been repealed.

Սահմանվել է հետևյալը.

- ✓ մինչև 100 աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելու ժամանակացույցը սահմանում է Օտոաշխատության պետը և այն տեղակայվում է Օտոաշխատության պաշտոնական կայքէջում (www.ssss.am),
- ✓ 100 և ավելի աշխատող ունեցող գործատուների կողմից աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելու ժամկետները փոխհամաձայնեցվում են գործատուների հետ:

Միաժամանակ, սահմանվել է, որ

- ✓ Օտոաշխատունը, մինչև 2017թ. մարտի 1-ը պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով ծանուցում է գործատուին աշխատանքային գրքույկների ներկայացման ժամկետների մասին, բայց նշյալ ժամկետները չեն կարող ավելի ուշ լինել, քան 2019թ. հունվարի 1-ը:
- ✓ գործատուն, մինչև իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելը, աշխատանքային գրքույկում լրացված վերջին էջից հետո նշում է աշխատանքային գրքույկում լրացված բոլոր էջերի թիվը և ստորագրում,
- ✓ գործատուն իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները ներկայացնում է Օտոաշխատության տարածքային բաժին կից ներկայացնելով աշխատանքային գրքույկների հանձնման-ընդունման ակտ: Ընդ որում, մինչև 10 աշխատող ունեցող գործատուի դեպքում ակտը լրացվում է տարածքային բաժնում, իսկ յուրաքանչյուր մինչև 50 աշխատանքային գրքույկի համար լրացվում է մեկ ակտ,
- ✓ աշխատանքային գրքույկները գործատուին են վերադարձվում հանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում, սակայն, այս ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավել քան 2 ամիսը,
- ✓ գործատուները աշխատանքային գրքույկները ծառայությունից վերցնելուց հետո հանձնում են աշխատակիցներին:

The following has been established:

- ✓ for employers with up to 100 employees the deadline for submission of employment record books to regional division is set by the head of the Service and it is placed on the official website of the Service (www.ssss.am),
- ✓ the deadlines for submission of employment record books to regional division for employers with more than 100 employees are mutually agreed with the employers.

At the same time, it has been established that:

- ✓ by 1 March 2017 the Service shall notify the employer by registered mail or hand-delivered letter evidenced by the signature of addressee or in other proper manner about deadlines for submission of employment record books, however, these deadline cannot be late than 1 January 2019.
- ✓ prior to submission of employment record books to regional division, the employer after completed last page of the employment record books shall indicate the total number of filled pages and put signature.
- ✓ the employer shall submit the maintained employment record books to regional division of the Service with the enclosed act of completion and acceptance. In case the employer has up to 10 employees, the act shall be completed in the regional division and for each up to 50 employment record books one act shall be completed.
- ✓ the employment record books shall be returned to the employer within one month after submission, however, this period can be prolonged but no more than for 2 months.
- ✓ after receiving the employment record books from the Service the employers shall hand them to the employees.

ՀԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

1. Անվանումը «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 7 հուլիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-116-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 54, 13 հուլիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ հեռակա էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի կամ հեռուստատեսային խանութների միջոցով վաճառքի իրականացման դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

2. Անվանումը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 20 հուլիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-136-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 56, 27 հուլիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ ԱԱՀ-ից ազատված գործարք են համարվում նաև սուբսիդիաները, սուբվենցիաները եւ դրամաշնորհային ծրագրերը, որոնք արժանացել են ՀՀ կառավարության կողմից ձեւավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը՝ որպես արտոնյալ ծրագիր (Օրենքի 15 հոդված, 38 կետ):

Միաժամանակ, սահմանվել է, որ արտոնյալ որակված ծրագրերի շրջանակներում իրականացվող գործարքները (գործառնությունները) ծրագրային նպատակներին և դրույթներին համապատասխան չիրականացնելու դեպքում նշված ծրագրերի՝ որպես արտոնյալ որակումը կարող է փոփոխվել կամ կասեցնել մասնագիտական հանձնաժողովը, որը հանգեցնում է նշված արտոնությունների գործողության դադարման կամ կասեցման: Իսկ սահմանված դեպքում հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի՝ որպես արտոնյալ որակումը երկու անգամ կասեցնելուց հետո արտոնությունների գործողությունը դադարում է:

Օրենքով սահմանվել է նաև, որ արտոնությունների գործողությունը դադարեցվելու դեպքում ավելացված արժեքի հարկի նախկինում չվճարված գումարը, ինչպես նաև այն ուշ վճարելու համար սահմանված տույժի գումարը վճարելու պարտավորությունը կրում են նշված սուբսիդիաները, սուբվենցիաները և դրամաշնորհներն ստացողները, ընդ որում՝ ավելացված արժեքի հարկի պարտավորությունների մասով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-ին հոդվածի առաջին մասով սահմանված վաղեմության ժամկետի հաշվարկման սկիզբ է համարվում ծրագրով սահմանված՝ դրա գործողության ժամկետի վերջը:

TAXES AND OTHER MANDATORY PAYMENTS

1. Title On making a supplement to the RA Law “On Cash Registers”

Document: RA law
 Date: 7 July 2016
 Number: HO-116-N
 Publication: OJ No. 54, 13 July 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

In accordance with this amendment to the law it has been established that use of cash registers for sales conducted through TV shops or remote electronic communication is not compulsory.

2. Title On making supplements to the RA Law “On Value Added Tax”

Document: RA law
 Date: 20 July 2016
 Number: HO-136-N
 Publication: OJ No. 56, 27 July 2016
 Effective: From the day following the official publication

Abstract:

In accordance with this amendment to the law it has been established that subsidies, subventions and grants that have been qualified as privileged projects by the positive conclusion of a professional commission formed by the RA government shall be also treated as transactions exempt from VAT (clause 38 of article 15 of the law).

At the same time it has been specified that in case of incompliance of the transactions (operations) performed within the scope of the project qualified as privileged with the project purposes and provisions, the qualification of such project as privileged can be changed or suspended by the professional commission, which leads to termination and suspension of these privileges. After the qualification of subsidies, subventions and grants as privileged has been suspended for two times by the professional commission in the prescribed cases, the privileges are terminated.

The law has also established that in case of termination of privileges the recipients of such subsidies, subventions and grants are liable for payment of previously non-paid amount of VAT as well as the amount of a penalty imposed for late payment, and for VAT liabilities the period of limitation specified in the first clause of article 30.1 of the RA Law “On Taxes” shall be calculated starting from the end of the term of validity as established by the project.

3. Անվանումը **ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 11 օգոստոսի 2016թ.
 Համարը. 826-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 63, 17 օգոստոսի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիրը.
 ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման մեջ: Մասնավորապես, այս որոշմամբ սահմանվել է, որ 2018թ. հունվարի 1-ից սոցիալական վճարները փոխանցվելու են միասնական հաշվին, նախկին կամուրջ հաշվի փոխարեն:

Հիշեցնենք, որ համապատասխան փոփոխություն էր կատարվել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում:

4. Անվանումը **ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի N 1364-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 18 օգոստոսի 2016թ.
 Համարը. 841-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 64, 24 օգոստոսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է 2016թ. հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա

Համառոտ նկարագիրը.
 ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 1364-Ն որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվել է.

- Հաշվարկային փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով դուրս են գրվում նաև խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով առաքման, նաև մաքսատնից (մաքսակետից) ապրանքի առաքման դեպքում,
- Հաշվարկային փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով դուրս չեն գրվում մաքսատնից (մաքսակետից) ապրանքի տեղափոխման դեպքում,
- Բիլինգային համակարգերի միջոցով հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ՀՀ կառավարության 11.11.2010թ. No. 1504-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով: *Այս դրույթը ուժի մեջ է մտել 2016թ. հոկտեմբերի 1-ից:*
- հաշվարկային փաստաթղթերի չեղյալ ճանաչելու մեխանիզմը նույնականացվել է հարկային հաշիվների չեղյալ ճանաչելու մեխանիզմի հետ:

Միաժամանակ, սահմանվել են որոշմամբ հաստատված հետևյալ փաստաթղթերի նոր ձևեր.

3. Title **On making amendments to the RA government decree No. 1676-N dated 20 December 2012**

Document: RA government decree
 Date: 11 August 2016
 Number: 826-N
 Publication: OJ No. 63, 17 August 2016
 Effective: From 1 January 2018
 Abstract:

In accordance with this RA government decree an amendment has been made to the RA government decree No.1676-N of 20 December 2016 on ensuring the enforcement of the RA Law “On Personified Accounting for Income Tax and Social Payments”. Particularly, by this decree it has been established that from 1 January 2018 social payments shall be transferred to a unified account instead of previously applied bridge account.

It should be reminded that a relevant amendment has been also made to the RA Law “On Funded Pensions”.

4. Title **On making amendments and supplements to the RA government decree No. 1364-N dated 5 December 2013**

Document: RA government decree
 Date: 18 August 2016
 Number: 841-N
 Publication: OJ No. 64, 24 August 2016
 Effective: From the 10th day following the official publication and is effective for the relations occurred from 1 July 2016

Abstract:
 In accordance with this RA government decree an amendment has been made to the RA government decree No. 1364-N of 5 December 2013 “On approval of a procedure on electronic issuing of settlement documents accompanying delivered or transported products, goods and that of the services rendered (works performed)”. Particularly, it has been established that:

- Settlement documents shall be issued electronically also in case of delivery of goods through pipelines, power transmission, telecommunication lines and from customs office.
- Settlement documents shall not be issued electronically in case of transportation of goods from customs office.
- Settlement documents shall be issued via billing systems in cases and according to the procedure prescribed by the RA government decree No: 1504-N of 11.11.2010. *This clause came into force from 1 October 2016.*
- Mechanism of invalidation of settlement documents has been identified with the mechanism of invalidation of tax invoices.

At the same time new forms of the below set documents approved by the decree have been established.

- ապրանքների առաքման հաշիվ-ապրանքագիր,
- ծառայությունների մատուցման հաշիվ-ապրանքագիր,
- ապրանքների տեղափոխման փաստաթուղթ:

- invoice for delivery of goods;
- invoice for provision of services;
- document for transportation of goods.

5. Անվանումը **Հարկ վճարողի գործունեության կասեցումը տուգանքով փոխարինելու վերաբերյալ դիմումի ձևը հաստատելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ ՊԵԿ հրաման
 Ամսաթիվը. 18 մայիսի 2016թ.
 Համարը. 51-Ն
 Հրապարակում. ԳՏ No. 14, 1 հուլիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է մտնում 2016թ. սեպտեմբերի 1-ից

Համառոտ նկարագիրը.

ՀՀ ՊԵԿ նախագահի այս հրամանով հաստատվել է հարկ վճարողի գործունեության կասեցումը տուգանքով փոխարինելու վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող դիմումի ձևը:

5. Title **On approval of a form of application for replacement of suspension of the taxpayer's activity by a penalty**

Document: RA SRC order
 Date: 18 May 2016
 Number: 51-N
 Publication: DJ No. 14, 1 July 2016
 Effective: From 1 September 2016

Abstract:

By this order of the Chairman of SRC a form of application to be submitted to the tax authorities for replacement of suspension of the taxpayer's activity by a penalty has been approved.

6. Անվանումը **Անմաքս առևտրի խանութ ապրանքների մուտքագրման և դրանց իրացման վերաբերյալ հաշվետվության ձևը սահմանելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ ՊԵԿ հրաման
 Ամսաթիվը. 6 հուլիսի 2016թ.
 Համարը. 107-Ն
 Հրապարակում. ԳՏ No. 15, 22 հուլիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ ՊԵԿ նախագահի այս հրամանով սահմանվել է անմաքս առևտրի խանութ ապրանքների մուտքագրման և դրանց իրացման վերաբերյալ հաշվետվության ձևը:

6. Title **On establishment of a form of the report on entry and sale of goods in a duty-free shop**

Document: RA SRC order
 Date: 6 July 2016
 Number: 107-N
 Publication: DJ No. 15, 22 July 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this order of the Chairman of SRC a form of the report on entry and sale of goods in a duty-free shop has been established.

Contact us

KPMG Armenia cjsc

8th floor, Erebuni Plaza Business Center,

26/1 Vazgen Sargsyan Street,

Yerevan, 0010, Armenia

Tel/Fax: +374(10) 566 762

E-mail: general@kpmg.co.am

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ

Վազգեն Սարգսյանի փ. 26/1,

«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Երևան, 0010, Հայաստան

Հեռ/Ֆաքս. +374(10) 566 762

Էլ-փոստ. general@kpmg.co.am

The information contained herein is of a general nature and is not intended to address the circumstances of any particular individual or entity. Although we endeavour to provide accurate and timely information, there can be no guarantee that such information is accurate as of the date it is received or that it will continue to be accurate in the future. No one should act on such information without appropriate professional advice after a thorough examination of the particular situation.

© 2016 KPMG Armenia cjsc, a company incorporated under the Laws of the Republic of Armenia, a member firm of the KPMG network of independent member firms affiliated with KPMG International Cooperative ("KPMG International"), a Swiss entity. All rights reserved.

The KPMG name and logo are registered trademarks or trademarks of KPMG International.

Սույնով ներկայացված տեղեկատվությունը ընդհանուր բնույթ է կրում և նպատակաուղղված չէ որևէ հատուկ անձի կամ քննչությունում առկա հանգամանքներին: Մենք փորձում ենք ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել ճիշտ ժամանակին, այնուամենայնիվ, որևէ երաշխիք չի կարող լինել այն մասին, որ այդ տեղեկատվությունը ճշգրիտ կլինի դրա ստացման ամսաթվի դրությամբ, կամ որ այն կշարունակի ճշգրիտ լինել ապագայում: Ոչ ոք չպետք է այդ տեղեկատվության հիման վրա որևէ գործողություն կատարի՝ առանց համապատասխան մասնագիտական խորհրդատվություն ստանալու տվյալ մասնավոր իրավության խորը ուսումնասիրությունից հետո:

© 2016 Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա՝ ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող Քեյ-Փի-Էմ-Ջի՝ անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG անվանումը և KPMG լոգոտիպը KPMG International կազմակերպության գրանցված ապրանքային նշաններն են :